

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
անշարժ (ֆիքսված) հեռախոսակապի ծառայության մատուցման

շրջան (քաղաք) համայնք _____

ամսաթիվ _____

Հեռահաղորդակցության օպերատորը՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Օպերատոր), որը գործում է իր կանոնադրության և ԼՂՀ տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների նախարարի կողմից տրված 2001թ. նոյեմբերի 19-ի N 315-1/2 լիցենզիայի հիման վրա, մի կողմից՝ ի դեմս գլխավոր տնօրեն Կարեկին Օդաբաշյանի, մյուս կողմից՝ բաժանորդը՝ ի դեմս _____

(Բաժանորդի անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի/իրավաբանական անձի/կազմակերպության դեպքում՝ անվանման, պետությանցման վկայականի տվյալներ)

_____/այսուհետ միասին՝ նաև Կողմեր/ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

Սույն Պայմանագրի համաձայն Օպերատորը տրամադրում է անշարժ (ֆիքսված) հեռախոսակապի հետևյալ ծառայությունները

- 1.1. Տեղական զանգերի հեռախոսային ծառայություն /միայն ԼՂՀ տարածքում/
- 1.2. Հեռախոսային ծառայության միացում դեպի ՀՀ, պատվերով կամ ավտոմատ միացման միջոցով).
- 1.3. Միջազգային միացում (պատվերով կամ ավտոմատ միացման միջոցով).
- 1.4. _____
- 1.5. _____

(նշել անհրաժեշտ ծառայությունները, բացակայող ծառայությունները նշել ըստ հեռահաղորդակցության օպերատորի համապատասխան անվանացուցակի)

2. Հեռահաղորդակցության Օպերատորի ծառայությունների մատուցման պայմանները

- 2.1. Հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելիս բաժանորդին տրամադրված բաժանորդային հեռախոսահամարը _____
- 2.2. Բաժանորդային սարքավորման տեսակը _____
(հեռախոսային սարք, մոդեմ, ֆաքս և այլն)
- 2.3. Բաժանորդային սարքավորման միացման սխեման _____

2.4. Բաժանորդային սարքավորման տեղադրման և հեռախոսային ծառայության մատուցման հասցեն _____

2.5. Հեռախոսակապի ծառայությունների մատուցման և վճարման արտոնությունների առկայությունը _____

3. Հեռահաղորդակցության Օպերատորի միջոցների զարգացմանը Բաժանորդի մասնակցությունը

(չբավականացնող հեռահաղորդակցության գծերի անցկացման շինարարական աշխատանքների իրականացումը)

4. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4.1. Օպերատորը պարտավորվում է՝

- 4.1.1. Բաժանորդին մատուցել անշարժ (ֆիքսված) հեռախոսակապի ծառայություն, օգտագործելով հատկացված բաժանորդային համարը _____
(հեռախոսակապից օգտվելու ժամանակի սկիզբը)
- 4.1.2. օրենքով սահմանված կարգով ապահովել Բաժանորդի հեռախոսազանգերի վերաբերյալ գաղտնիությունը.
- 4.1.3. հետևել սույն Պայմանագրի պայմաններին և դրույթներին.
- 4.1.4. Բաժանորդի կողմից հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող երկրորդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում, կասեցված հեռախոսային ծառայությունները միացնել:
- 4.1.5. Օպերատորի մեղքով ծառայության ընդհատման դեպքում Օպերատորը պարտավոր է վերականգնել _____

ծառայությունը՝ եռօրյա ժամկետում: Նշված ժամկետում ծառայության չվերակազմման դեպքում Օպերատորը պարտավորվում է Բաժանորդի դիմումի հիման վրա կատարել չօգտագործված օրերի վճարման վերահաշվարկ:

4.1.6. Ծառայության դիմաց գանջվող վճարների փոփոխությունների մասին բաժանորդին տեղեկացնել ոչ ուշ, քան սակագների ներդրումից 30 օր առաջ, բացառությամբ նվազեցման դեպքերի:

4.2. Օպերատորն իրավունք ունի՝

4.2.1. տեղեկացնել Բաժանորդին հեռախոսացանցում նախատեսվող աշխատանքների մասին, ինչպես նաև ժամանակավորապես սահմանափակել կամ կասեցնել ծառայության մատուցումը: Նշված դեպքերում Օպերատորը պարտավոր է ապահովել Բաժանորդի կողմից ուստիկանություն, շտապուժօգնություն, հրշեջ և փրկարարական ծառայություններ զանգահարելու հնարավորությունը, եթե դա տեխնիկապես անհնար չէ;

4.2.2. կասեցնել հեռախոսային ծառայությունների մատուցումը, հաշվետու ամսվան (հաշվարկային ժամանակահատվածին) հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ Բաժանորդի կողմից հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումները չկատարելու դեպքում, բացառությամբ հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված դեպքերի:

4.2.3. հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող երկրորդ ամսվա վերջին օրվա դրությամբ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չմարելու դեպքում, այդ ծառայությունների դադարեցման օրվանից երկու ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգնման հնարավորությունը:

Հեռախոսակապի ծառայությունների դադարեցման օրվանից երկու ամսվա ընթացքում բաժանորդի կողմից առկա պարտքերը չմարելու և վերականգնման միանվագ ծառայության վարձը չվճարելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված և հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով:

4.2.4. անհապաղ դադարեցնել ծառայությունների մատուցումը և լուծել բաժանորդային պայմանագիրը, եթե բաժանորդին տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և օպերատորի հետ համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու, վերավաճառելու, չսերտիֆիկացված սարքի միջոցով օգտագործելու և այլ անօրինական նպատակներով:

4.2.3. ոչ նշացնել Բաժանորդի հեռախոսագծով կատարված հեռախոսազանգերի մասին որևէ տեղեկություն/հաշիվ, վերծանում/, եթե բաժանորդը վերջին 6/վեց/ ամսվա ընթացքում նման պահանջ չի ներկայացրել:

4.3. Բաժանորդը պարտավորվում է՝

4.3.1. սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարել մատուցվող ծառայությունների դիմաց վճարումները:

4.3.2. Ոչ ուշ, քան 1-ամսյա ժամկետում, նախապես, Օպերատորին տեղեկացնել ծառայություն մատուցվող բնակարանից/տարածքից/ այլ բնակարան/տարածք/ տեղափոխվելու, հեռախոսաֆիկացված տարածքների վաճառքի, ազգանվան, անվան, անվանման, բնակության/գործունեության/ հասցեի/վայրի/ փոփոխության, հեռախոսակապի ծառայությունների մատուցման և վճարման արտոնությունների ձեռքբերման կամ դրանք կորցնելու մասին:

4.3.3. Օպերատորին Ներկայացնել հավաստի և ճիշտ տվյալներ վերջինիս կողմից կատարված հարցումների և հեռախոսային կապին առնչվող այն տեղեկություններին, որոնք կպահանջվեն;

4.3.3. ինքնուրույն, առանց Օպերատորի տեղեկացման, ձեռնպահ մնալ որևէ աշխատանքի կատարումից՝ կապված բաժանորդային սարքավորումների և հեռախոսային գծերի հետ:

4.3.4. Ձեռնպահ մնալ առանց Օպերատորի գրավոր համաձայնության, մատուցվող ծառայությունն, վերավաճառելուց և օրենքին հակասող ցանկացած այլ նպատակներով, այդ թվում՝ շահույթ ստանալու նպատակով օգտագործելուց:

4.3.5. Իրեն պատկանող /օգտագործվող/ հեռախոսաֆիկացված տարածքում գոյություն ունեցող հեռախոսակապի ցանցին, սարքերին, մալուխներին կամ գծերին իր կամ այլ անձանց մեղքով պատճառված վնասների դեպքում որևէ հատուցում չպահանջել օպերատորից:

4.3.6. Ծառայության խափանման դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել Օպերատորին;

4.3.7. Հեռախոսացանցի անսարքություններ վերացման նպատակով թույլատրել Օպերատորին՝ աշխատելու հեռախոսացանցի մաս կազմող սարքավորումների. խահանաբաժան կետերի, ինչպես նաև հեռախոսացանցի միացված լարերի և վերջնակետային սարքավորումների վրա:

4.3.8. Կրել վերանորոգման ծախսերը, եթե վերանորոգման անհրաժեշտություն առաջացնող անսարքությունն առաջացել է իր մեղքով;

4.3.9. Պահպանել պայմանագրով սահմանված պահանջները:

4.4. Բաժանորդն իրավունք ունի՝

4.4.5. Պահանջել օպերատորից՝ պատշաճ կերպով մատուցելու սույն պայմանագրով սահմանված Ծառայությունը;

4.4.6. Սույն պայմանագրի 4.1.5 ենթակետում նշված ժամկետում ծառայությունը չվերակազմելու դեպքում պահանջել չօգտագործված ժամանակահատվածի համար հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ;

4.4.7. Պահանջել և ստանալ օպերատորից

4.4.7. Օգտվելու օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

5. Մատուցվող հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը

5.1. Հեռախոսակապի ծառայության դիմաց օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով Բաժանորդից գանձվում է ամսական վարձավճար:

5.1. Հաշվի վճարման ձևը _____

(կանխիկ, անկանխիկ փոխանցում)

5.2. Մատուցվող հեռախոսակապի ծառայությունների վճարման կարգը

(նախնական վճար, ժամկետը երկարաժամկետ վճար)

5.3. Հեռահաղորդակցության օպերատորի կողմից մատուցվող տեղական հեռախոսակապի ծառայությունների,

(բաժանորդային, բաժանորդային-ժամանակավճարային)

5.4. Վճարման ժամկետը _____

Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հաշվարկային անսվան հաջորդող անսվա մինչև վերջին օրը ներառյալ:

Պայմանագրի գործողության ժամկետը _____

(անժամկետ կամ նշել կոնկրետ ժամանակահատվածը)

Պայմանագրի լուծման դեպքում կատարվում է վերջնահաշվարկ, որի արդյունքում բաժանորդին են վերադարձվում մնացորդում առկա դրամական միջոցները:

6. Պայմանագրի լուծումը և Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերն իրավունք ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել պայմանագիրը: Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին սույն պայմանագրից բխող իրենց վճարային պարտավորություններից:

6.2. Օպերատորը և Բաժանորդը պատասխանատվություն են կրում համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության, հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոնների և սույն պայմանագրի:

6.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում իր հսկողությունից դուրս տեղի ունեցած վթարների, ֆորս-մաժորային իրավիճակների, Բաժանորդի կամ երրորդ անձանց մեղքով, կամ էլեկտրականության բացակայության պատճառով Բաժանորդին չմատուցված ծառայությունների համար:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը իր օգտին երրորդ անձի կողմից, սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց կատարել վճարումներ:

Բաժանորդը հավաստիացնում է, որ նախապես ծանոթացել է հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններին:

7.2. Օպերատորը հեռախոսագանգի միջոցով սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց երրորդ անձանց պարտքի վերաբերյալ տեղեկություններ չի տրամադրում: Պարտքի վերաբերյալ տեղեկություններ կարող են տրամադրվել միայն տվյալ հեռախոսահամարի բաժանորդին կամ օրենքով սահմանված կարգով լիազորված անձանց՝ Ընկերության սպասարկման կենտրոններում:

7.3. Կողմերի միջև ծագած ցանկացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում ենթակա են լուծման դատական կարգով:

7.4. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և չեղարկում ու փոխարինում է կողմերի միջև նույն առարկայի վերաբերյալ բանավոր և գրավոր բոլոր նախորդ բանակցությունները, պայմանավորվածությունները և պայմանագրերը:

7.5. Ստորագրելով սույն Պայմանագիրը Բաժանորդը տալիս է իր թույլտվությունը վավերապայմանների մեջ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին ստանալ էլեկտրոնային նամակներ Օպերատորից՝ վերջինիս գործունեությունը լուսաբանող տեղեկություններով, ներառյալ նորություններ, գովազդային նյութեր, ծանուցումներ և/կամ առաջարկներ:

8. Կողմերի վավերապայմանները, հասցեները և բանկային տվյալները

Օպերատոր

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ
Ք. Ստեփանակերտ, Վ. Մամիկոնյանի, 23
Հ/Հ 247703333330000
ՀՎՀՀ 90015278
www.kt.am,
097-200-111, 111

Բաժանորդ

էլեկտրոնային հասցե

ստորագրություն

ստորագրություն